ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

28 օգոստոսի 2017 թվականի թիվ 40 -Ա

ՀՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի <<ա>> ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ կրթության պետական տեսչության պետի 2017 թվականի հունիսի 1-ի N 04/24.4/7113-17 գրությունը և Հ.Պողոսյանի բացատրությունը՝

կարգադրում եմ.

1.Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները խախտելու համար <<ՀՀ Տավուշի մարզի Իջևանի թիվ 3 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի նկատմամբ կիրառել <<նկատողություն>> կարգապահական տույժը:

2. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

2017թ. օգոստոսի 28
ք.Իջևան